Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.03.2021թ. թիվ 2112436097 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<05>> 04 2021թ. 7-13 5704 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ռազմիկ Ավետիսյանի թիվ ՄԴ/28109-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Այգեստան 11 փողոցի 1 փան բնակիչ Կարեն Հովհաննիսյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.03.2021թ. թիվ 2112436097 որոշումը՝ նշելով, որ գծանշման պահանջը խախտել է երթևեկության այլ մասնակցի գործողության պատճառով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 1.1՝ հոծ գիծ, որը բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գիծ), նշում ճանապարհի վտանգավոր վայրերում երթևեկության գոտիների սահմանները և ցույց տալիս երթևեկելի մասի սահմանները, **ուր մուտքն արգելված է**, ցույց է տալիս տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները:

Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ Երևան քաղաքի Սեբաստիա-Ա.Վեգներ փողոցների խաչմերուկի հատվածում դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 24.02.2021թ. ժամը 08^{14}-ին՝ խախտելով վերը նշված նորմի պահանջը, հատել է հանդիպակաց հոսքերն իրարից բաժանող բաժանող 1.1՝ հոծ գիծ, գծանշումը, ինչը վերը նշված նորմով արգելված է:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանն՝ իրավախախտումը հարկադրված կատարելու վերաբերյալ, ապա այն արժանահավատ համարել հնարավոր չէ, քանի որ տեսանյութի ուսումնասիրությամբ պարզվել է, որ իրավախախտումը չի կատարվել երթևեկության այլ մասնակիցների գործողության կամ անգործության պատճառով:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.03.2021թ. թիվ 2112436097 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռազմիկ Ավետիսյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Դ.Բալաբանյան
Հեռ.՝ 011 544-783